Կ-361[14]-23.08.2022-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքը լրացնել նոր 10.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 10.1 Շահերի բախումը

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չպետք է թույլ տա «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված իրավիճակի առաջացում:

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավիճակների առաջացման դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել Քննչական կոմիտեի նախագահին:»:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) սույն օրենքի 10.1-ին հոդվածով սահմանված դեպքում:»:

Հոդված 3. Եզրափակիչ մաս.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: